Մաքուր մտածելակերպ փոխհարաբերությունների վերաբերյալ

Մաքուր մտածելակերպ (մաս 2)

«Արդ, մնում են այս երեքը՝ հավատ, հույս, սեր, և սրանցից ամենամեծը սերն է:» Ա Կորնթացիս 13:13

«Բայց եթե միմյանց խայթեք և ուտեք, զգուշացե՛ք, որ միմյանց չոչնչացնեք:» Գաղատացիս 5:15

Ինչ անել,

-Երբ թվում է, թե խորտակվում ես

-Երբ ճնշված ես վիրավորանքից ու բարկությունից

-Երբ լցված ես անտարբերությամբ

-Երբ դիմագրավում ես շփոթմունքի

-Երբ տառապում ես եսասիրությունից

1. Շնորհակալություն հայտնիր Աստծուն մեր տարբերությունների համար

«Եվ Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով. Աստծու պատկերով ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց:» Ծննդոց 1:27

«Միմյանց ընդունե՛ք, ինչպես որ Քրիստոսը ձեզ ընդունեց Աստծու փառքի համար:» Հռոմեացիներին 15:7

2. Քո հիասթափությունները բեր Աստծուն

«Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով միմյանց հանդուրժելով.» Եփեսացիս 4:2

«Սերը ամեն բան հանդուրժում է, ամեն բանի հավատում, ամեն բանի հանդեպ հույս ունի, ամեն բանի համբերում է:» Ա Կորնթացիս 13:7

3. Վստահիր Աստծուն քո զգացմունքները

«Ամեն ժամանակ ձեր հույսը նրա վրա՛ դրեք, ո՛վ ժողովուրդներ, ձեր սրտերը բացե՛ք նրա առաջ. Աստված մեր ապավենն է:» Սաղմոս 62:8

«Աննկուն պահենք հույսի դավանությունը, որովհետև խոստացողը հավատարիմ է:» Եբրայեցիս 10:23

«Մեզ քե՛զ վերադարձրու, ո՛վ Տեր, և մենք կվերադառնանք. մեր օրերը նորոգի՛ր նախկինի պես:» Երեմիայի Ողբերը 5:21

4. Խնդրիր Աստծո առաջնորդությունը

«Իսկ եթե ձեզանից մեկն իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուն, որ բոլորին առանց նախատելու պարզապես տալիս է, և նրան կտրվի: Միայն թե թող նա հավատով խնդրի:» Հակոբոս 1:5-6

«Միայն թե ամեն ոք թող ապրի այն վիճակում, որ Տերը բաժին է հանել. ինչպես որ նրան Աստված կանչեց, թող այնպես ընթանա: Ես բոլոր եկեղեցիներում այսպես եմ պատվիրում:» Ա Կորն. 7:17

5. Հիսուսի թող լինի քո կյանքի օրինակը

«Միմյանց հետ քա՛ղցր եղեք, գթած՝ միմյանց ներելով, ինչպես որ Աստված էլ Քրիստոսի միջոցով ձեզ ներեց:» Եփեսացիս 4:32

« Ոչինչ մի՛ արեք հակառակությամբ և ոչ էլ սնապարծությամբ, այլ խոնարհությամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի: Թող ձեր մեջ լինի այն խոհեմությունը, որ Քրիստոս Հիսուսի մեջ էր, որ Աստծու բնությունն ունենալով՝ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց.» Փիլիպ. 2:3,5-6

«Որդյակնե՛ր, խոսքով և լեզվով չսիրենք, այլ գործով ու ճշմարտությամբ:» Ա Հովհաննես 3:18

Հաջորդ քարոզի թեման

Մաքուր մտածելակերպ
սրտի փոփոխության վերաբերյալ

Հովիվ Սարո Խաչիկեան